

ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Այս գրույցը մեզ է հասել շատ վաղուց: Մեզ պատմել են մեր տատերը, մեր տատերին պատմել են իրենց տատերը:

Հազարավոր տարիներ առաջ, երբ մեր աշխարհը նոր էր ձևավորվում, չկար արև, ու շատ ցուրտ էր, որպեսզի կենդանական և բուսական աշխարհը կարողանար գոյատևել ու բազմանալ, արևի աստվածը վառում էր կրակ իր ձեռքերի մեջ, լուսավորում էր և ջերմություն տալիս մարդկանց ու բնությանը: Այսպես կյանքը ընկնում էր իր բնական հունի մեջ: Մարդիկ շատ երախտապարտ էին և իրենց գոհունակությունն էին հայտնում աստվածներին: Արևի, քամու, ջրի, լույսի և շատ ու շատ աստվածներ օգնում էին մարդկանց, աշխատում նրանց օգտին, և մարդիկ շատ էին սիրում աստվածներին ու զոհաբերություններ անում նրանց պատվին: Սակայն ժամանակ առ ժամանակ աստվածները ցանկանում էին, որ մարդիկ իրենց համար զոհաբերեն ամենաթանկը, ինչը որ նրանք ունեին:

Այդ ժամանակներում մեր գյուղում ապրում էր Սաղաթել անունով մի մարդ, ով ուներ 3 աղջիկ, նրանք շատ սիրուն էին և հմուտ իրենց գործերում: Սաղաթելը գիտեր, որ մի օր իր չքնաղ աղջիկներին պետք է զոհաբերի աստվածներին ու որոշեց գտնել զորեղ փեսացուների և ամուսնացնել իր աղջիկներին, նրանք կունենան գեղեցիկ, ուժեղ և հնարամիտ երեխաներ. մարդիկ նրանց կսիրեն ու կհարգեն ինչպես աստվածների:

Աստվածներին դուր չեկան այդ ինքնավստահությունը և մարտահրավերը, և նրանք տարան Սաղաթելի երեք աղջիկներին: Մեծ աղջկա անունը Արևիկ էր, նրան արևի աստվածը տարավ երկինք, որ ամեն օր՝ առավոտից իրիկուն, լուսավորի ու ջերմացնի մոլթ ու ցուրտ աշխարհը: Միջնեկ աղջկա անունը Աստղիկ էր, նրան տիեզերքի աստվածը տարավ տիեզերք, որ կարողանար աստղերի միջոցով կողմնորոշել մարդկանց:

Փոքր աղջկա անունը Լուսին էր, նրան բերք ու բարիքի աստվածը տարավ մեզ ամենամոտիկ մոլորակը, որ նա իր լույսով կարողանար մեզ հուշել սպասվող թե՛ առատությունը, թե՛ աղետը:

Սաղաթելը չդիմացավ այդ վշտին և մահացավ: Աստվածները հրամայեցին, որ նրան թաղեն մեր գյուղի վերևում, որտեղ այսօր գտնվում է վանքը, որպեսզի նրա գերեզմանը ուղղված լինի դեպի Սպիտակասար, որ նա երբեք չկարողանա տեսնել հիասքանչ լուսաբացը ու որ միշտ տեսնի այն աղջիկներին, որոնց տանում էին՝ զոհաբերելու ջրի աստծուն Սպիտակասարի փեշերին, որտեղից սկիզբ

Է առնում Գավառագետը: